

ՄԱՐԶԻ ՎԱՆԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՌԻԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77¹, 77², և 77³ հոդվածների և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Առաջարկել մարզի Վանևան համայնքի ղեկավարին՝
 - 1) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտերը «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, սահմանված ժամկետում և կարգով ներկայացնել պետական լիազոր մարմին՝ պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման.
 - 2) հաստատել և գործողության մեջ դնել համայնքի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությունը նոր խմբագրությամբ.
 - 3) իրավական ակտերում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրականացնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի հիմքով.
 - 4) ընդունվող իրավական ակտի նախաբանում կամ բովանդակության մեջ պետք է նշվի որ նորմատիվ իրավական ակտի, դրա մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվում.
 - 5) հաստատել և գործողության մեջ դնել համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության կարգը.
 - 6) միջոցներ ձեռնարկել աշխատակազմում գործավարությունը և արխիվային գործը պահանջվող հիմքերի վրա դնելու ուղղությամբ.
 - 7) հաստատել և գործողության մեջ դնել համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների նոր աշխատակարգերը.
 - 8) ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի դրույթներով չեղյալ համարել համայնքի ղեկավարի 2009թ. ապրիլի 22-ի N 7-Ա որոշումը.
 - 9) ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով փոփոխություններ և լրացումներ կատարել աշխատակազմի քարտուղարի պաշտոնի անձնագրի 6-րդ «Գիտելիքներ և հմտություններ» գլխի 10-րդ կետի «ա» ենթակետի մեջ.
 - 10) համայնքային ծառայողների անձնական գործերը վարել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006թ. նոյեմբերի 7-ի N 20-Ն հրամանով հաստատված կարգին համապատասխան.
 - 11) ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներով ծառայողական պարտականությունները անհարգելի պատճառով ոչ պատշաճ կատարելու համար կարգապահական պատասխանատվության ենթարկել աշխատակազմի քարտուղարին.

- 12) պահպանել ավագանու նիստերի հրավիրման, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով սահմանված ոչ ուշ քան 2 ամիսը մեկ պարբերականությունը.
- 13) համայնքում հաշվապահական հաշվառումն իրականացնել <<Հաշվապահական հաշվառման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով.
- 14) սույն որոշմամբ ներկայացված առաջարկությունները քննարկել համայնքի ավագանու նիստում և ձեռնարկված միջոցների ու կատարված աշխատանքների մասին գրավոր տեղեկացնել մարզպետին մինչև ս/թ հոկտեմբերի 20-ը:
2. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությանը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ